Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՆԱԽԱԳԾԻ (Պ-362-13.11.2019-ՊԻ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| *1.* | Հեղինակ Կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված նորմը առանձին հոդվածի տեսքով նախատեսել Օրենսգրքի 11-րդ գլխում: Այսպիսով, Օրենսգրքի 76-րդ հոդվածը 3-րդ նոր մասով լրացնելու փոխարեն, Օրենսգիրքը լրացնել նոր $93^{1}$ հոդվածով: | Ընդունվել է | Ընդունվել է |
| *2.* | Հեղինակ | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված $93^{1}$ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.<br>«Անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական ներկայացուցիչ չեն կարող | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասնակցել նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, եթե նրանք նույն քրեական գործով հանդիսանում են քրեական դատավարությանը մասնակցող անձ»: | | |
| 3. | Կառավարություն Հեղինակ | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածում Օրենսգրքի 205[1] հոդվածը 2.1 մասով լրացնելու փոխարեն Օրենսգրքի 205[1] հոդվածի 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «չորս» բառով: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 4. | Կառավարություն | Նախագծի 3-րդ հոդված , մաս 1-ին | Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի հանել «կամ սոցիալական աշխատող բառերը: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 5. | Կառավարություն | Նախագծի 3-րդ հոդված, մաս 5-րդ | Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված Օրենսգրքի 207-րդ հոդվածում լրացվող 5-րդ կետում «հարցեր է տալիս» բառերը փոխարինել «կարող է հարցեր տալ» բառերով: | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *6.* | Կառավարություն | Նախագծի 5-րդ հոդված | Նախագծի 5-րդ հոդված նախատեսված Օրենսգրքի 216 հոդվածում լրացվող 8-րդ մասում հղ կատարել Օրենսգրքի 207-րդ հոդվա 6-րդ մասին Նախագծով առաջարկվ 207-րդ հոդվածի 3-րդ մասի փոխարե | Ընդունվել է | Ընդունվել է |
| *7.* | Կառավարություն | Նախագծի 5-րդ հոդված | Նախագծի 5-րդ հոդվածում հանել «Արգելվում են անչափահաս տուժողի անմիջական հանդիպումները կասկածյալի կամ մեղադրյալի հետ:» նախադասությունը: | Ընդունվել է | Ընդունվել է |
| *8.* | Կառավարություն | Նախագծի 6-րդ հոդված | Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված Օրենսգրքի 341-րդ հոդվածում «և ցուցմունքներ» բառերը փոխարինել «կամ տալ ցուցմունքներ» բառերով: | Ընդունվել է | Ընդունվել է |
| *9.* | Հեղինակ | Նախագծի 6-րդ հոդված | Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված լրացվող 341-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում հանել «կամ սոցիալական | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատողի» բառերը: | | |
| 10 | Կառավարություն | Նախագիծ | Նախագծում «տեսաձայնագրում» բառը փոխարինել «տեսաձայնագրառում» բառով: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 10. | Հեղինակ | Նախագիծ | Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառը փոխարինել «փոփոխություններ» բառով: | | |